

## **Նոյեմբերի 1-ից 17-ը հանրային իրազեկման դասախոսությունների օր՝ Արագածոտնում**

Ձմեռային սեզոնի նախաշեմին Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունը նոյեմբերի 1-ից 17-ը Աշտարակի, Թալինի, Ապարանի և Արագածի տարածաշրջանի ՏԻ մարմիններում և դպրոցներում նախաձեռնել էր հանրային իրազեկման դասախոսությունների շարքը << Ձնաբքի մեջ հայտնված մարդու վարվեցողության կանոնները>>, << Ձմեռային շրջանի ջեռուցման կապակցությամբ հրդեհային անվտանգության կանոնների պահպանումը>>, <<Այրվածքների և ցրտահարության դեպքում առաջին բուժօգնությանը>> թեմաներով: Դասախոսություններն անցկացվեց դիտակտիվ նյութերի ցուցադրումով, որը բարձրացրեց մասնակիցների հետաքրքրությունը թեմաների նկատմամբ: Դասախոսություններին մասնակցեց 248 ուսուցիչ, 752 աշակերտ և 41 համայնքային աշխատող:

Դասախոսություններին ներկա էր նաև Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ փրկարար ծառայության գնդապետ Ա. Մանուկյանը, ով ներկայացրեց Արագածոտնի մարզային փրկարարական վարչության կողմից կատարած փրկարարական տարբեր աշխատանքներ: